

«Խտրականության դեմ» ՀՀ օրենք

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն օրենքը սահմանում է խտրականության կանխարգելման և հակազդման կազմակերպչաիրավական հիմքերը, խտրականության հասկացությունը և տեսակները, խտրականության կանխարգելման և հակազդման մեխանիզմները:
2. Սույն օրենքի նպատակն է ապահովել անձի և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ:

Հոդված 2. Խտրականության դեմ օրենսդրությունը

1. Խտրականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:
2. Եթե ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված են այլ նորմեր քան սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերը:

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, նրանց պաշտոնատար անձանց և բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:
2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ հասարակական ոլորտների վրա.
 - 1) հասարակաքաղաքական գործունեության;
 - 2) պետական ծառայության և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության;
 - 3) արդարադատություն;
 - 4) աշխատանքային հարաբերությունների;
 - 5) առողջապահության;
 - 6) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի;
 - 7) հանրային տեղեկատվության և զանգվածային լրատվամիջոցների;
 - 8) ապրանքների և ծառայությունների մատչելիության և մատուցման;
 - 9) իրավապահ մարմինների գործունեության;
 - 10) սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական բարեկեցության, կենսաթոշակների, առողջության ապահովագրման և գործազրկության նպաստի;
 - 11) բնակարանային հարաբերությունների;
 - 12) այլ հասարակական հարաբերությունների ոլորտների վրա:

Հոդված 4. Խտրականության դեմ ՀՀ օրենքի հիմնական սկզբունքները

1. ՀՀ օրենսդրությունը հիմնված է խտրականության կանխարգելման և հակազդման սկզբունքների վրա, որը անկախ այլ հատկանիշներից, նախատեսում է.

- 1) խտրականության կանխարգելման և հակազդման ոլորտում միջազգային նորմերի պահպանումը;
- 2) օրինակությունը;
- 3) սոցիալական արդարությունը;
- 4) խտրականության բացառումը;
- 5) թափանցիկությունը;
- 6) անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքների և ազատության խթանումը;
- 7) անձի և/կամ մի խումբ անձանց հավասարությունը օրենքի առջև;
- 8) յուրաքանչյուր անձի արժանապատվության նկատմամբ հարգանքը;
- 9) անձի և/կամ մի խումբ անձանց հավասար հնարավորությունների ապահովումը:

Հոդված 5. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ իմաստը՝

1. **Խտրականություն**- անձի սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագումի, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի, առողջական վիճակի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով որոշումներ, գործողություններ կամ անգործություն, իրավական նորմեր կամ գնահատման չափանիշներ, բացառումներ, սահմանափակումներ կամ նախապատվություն, պայմաններ կամ պրակտիկա, որոնք նպատակաուղղված են անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակելուն, բոլոր անձանց կողմից մյուսների հետ հավասար հիմքերով իրականացման և դրանց ճանաչմանը խոչընդոտելուն: Այն նաև ընդգրկում է անձի իրական կամ ենթադրյալ անդամակցությունը, նույնականացումը սույն օրենքով պաշտպանված որևէ խմբի հետ;

2. **Անհրաժեշտ հնարավորություններ**- անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարում, որոնք չեն պահանջում անտեղի ջանքեր, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց կիրառումը:

3. **Ուղղակի խտրականություն**- որոշումներ, գործողություններ կամ անգործություն, ուղղված որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակմանը, ցանկացած տարբերակմանը, բացառմանը կամ նախապատվությանը, որը նպատակաուղղված է կամ հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

4. **Անուղղակի խտրականություն**- առերևույթ չեզոք/ոչ խտրական օրենքներ, քաղաքականություն, պրակտիկա կամ չափանիշներ, որոնց իրականացման կամ կիրառման դեպքում առաջանում է կամ կարող է առաջանալ որոշակի հատկանիշներով անձի կամ մի խումբ անձանց իրավունքների սահմանափակում կամ արտոնությունների ձեռք բերում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ այդպիսի գործողությունները կամ անգործությունը, իրավական նորմերը կամ գնահատման չափանիշները, պայմանները կամ պրակտիկան օրյեկտիվորեն

հիմնավորված են տվյալ անձի և/կամ մի խումբ անձանց համար հավասար հնարավորությունների ապահովմանը, նրանց օրենքով նախատեսված հավասար իրավունքների և ազատությունների ապահովմանը:

5. **Խտրականության հրահրում**- որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ խտրականության կամ բացահայտ նախապատվության, նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորման հրահանգներ, ցուցումներ կամ կոչեր:

6. **Կառուցողական գործողություններ**- հատուկ/առանձնահատուկ ժամանակավոր միջոցներ՝ ուղղված մի խումբ անձանց և մնացած հասարակության միջև իրավական կամ փաստացի անհավասարությունների վերացմանը՝ հնարավորություն ընձեռելով անձին և/կամ մի խումբ անձանց իրացնել օրենքով նախատեսված հավասար իրավունքներն ու ազատությունները:

7. **Որոշակի հատկանիշներ**- անձի և/կամ մի խումբ անձանց ենթադրյալ կամ իրական առանձնահատկությունները կախված **սեռից, ռասայից, գենդերից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակից, առողջական վիճակից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:**

8. **Պաշտպանված խումբ**- անձ և/կամ մի խումբ անձինք, որոնք ունեն **որոշակի հատկանիշներ**, նախատեսված սույն օրենքի հոդված 5.7-ում;

9. **Հետապնդում**- **որոշակի հատկանիշներ ունեցող անձի և/կամ մի խումբ անձանց համար անցանկալի բանավոր, ոչ-բանավոր կամ ֆիզիկական պահվածք, որը հանգեցնում է կան նպատակ է հետապնդում անձի և/կամ մի խումբ անձանց արժանապատվության վիրավորելուն և նրանց համար ահաբեկող, թշնամական, վիրավորական կամ մերժողական միջավայր ստեղծելուն;**

10. **Մեռական ոտնձգություններ**- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծին համապատասխան

11. **Մեզրեզացիա**- որոշման, գործողության կամ անգործություն, որը ուղղակի կամ անուղղակի հանգեցնում է անձի և/կամ մի խումբ անձանց **որոշակի հատկանիշների հիման վրա բաժանմանը, տարբերակմանը կամ չնույնացմանը:**

12. **Իրավիճակի փորձարկում**- խտրականության մասին վկայող ապացույցների ձեռքբերման միջոց, որն իրականացվում է դիտավորյալ նմանատիպ իրավիճակներ ստեղծելով, որտեղ հավանական խախտողը խտրականության կենթարկի տուժածին առանց իմանալու, որ նրան հետևում են:

13. **Վիկտիմիզացիա**- անձի և/կամ մի խումբ անձանց համար բացասական հետևանքներ ունեցող ցանկացած գործողություն կամ անգործություն ի պատասխան դիմում ներկայացնելուն, սույն օրենքի կիրառման ապահովման նպատակով դատական գործ սկսելուն կամ մեկ այլ անձի դիմումի կամ դատական գործի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն:

14. **Աշխատանք**- եկամուտ ձեռքբերելու նպատակով անձի և/կամ մի խումբ անձանց օրենքով սահմանված գործունեություն: Աշխատանքի ոլորտն իր մեջ ներառում է նաև զբաղմունք, մասնագիտական վերապատրաստումներ, աշխատանք, այդ թվում առանձնահատուկ աշխատանք, ձեռքբերելու մատչելիություն, աշխատանքի պայմաններ և աշխատանքից ազատում:

15. **Հանրությանը մատչելի ապրանքներ ու ծառայություններ**- բոլոր ապրանքները, ծառայությունները, հարմարությունները, առավելությունները, որոնք առաջարկվում, վաճառվում կամ, այլ կերպ, մատչելի են հանրությանը, ներառյալ անվճար և վճարովի տրամադրվող ապրանքներն ու ծառայությունները: Հանրությանը մատչելի ապրանքներն ու ծառայությունները ներառում են.

- ա. Բանկային, ապահովագրության ոլորտներ և դրամաշնորհների, վարկերի, ապառիկի կամ ֆինանսավորման ապահովում,
- բ. Առողջապահություն և կրթություն,
- գ. Ժամանցային, վերականգնողական ոլորտներ,
- դ. Տրանսպորտի, ճանապարհորդություն, կացարան,
- ե. Ցանկացած մասնագիտություն կամ արհեստ,
- զ. Խորհուրդ կամ հանրային իշխանություն:

Հոդված 6. Խտրականության տեսակները

1. Խտրականության տեսակներն են՝

- 1) ուղղակի խտրականություն,
- 2) անուղղակի խտրականություն,
- 3) խտրականության հրահրում,
- 4) հետապնդում,
- 5) սեռական ոտնձգություն,
- 6) սեգրեգացիա:

2. Հաշմանդամության հինքով խտրականությունն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:

Հոդված 7. Խտրականության արգելքը

1. Համաձայն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների, **միջազգային նորմերի և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի յուրաքանչյուր անձ անկախ որոշակի հատկանիշներից ունի հավասար իրավունքներ և ազատություններ**, ինչպես նաև հավասար հնարավորություն դրանց իրականացման համար:

2. **Որոշակի հատկանիշների** կան սույն օրենքով պաշտպանված խմբում ենթադրյալ անդամակցության հիմքով **անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ յուրաքանչյուր տեսակի խտրականությունը** պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից արգելվում է:

3. Վերաբերմունքը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակներ կամ եթե կիրառված մեթոդների և հետանպնդվող նպատակի միջև համաչափության հարաբերակցությունը ողջամիտ չէ:

4. **Գործատուն պատասխանատվություն է կրում սույն օրենքի խախտմամբ աշխատավայրում տեղի ունեցող խտրականության ցանկացած դրսևորման համար:**

Այն ներառում է մյուս աշխատակիցների, գործատուի գործակալների կամ հաճախորդների կողմից դրսևորված հետապնդումները: Գործատուն ազատվում է աշխատավայրում հետապնդումների համար պատասխանատվությունից, եթե կարող է ապացուցել, որ ձեռնարկել է ողջամիտ, գործնական քայլեր հետապնդումները կանխելու կամ վերացնելու ուղղությամբ:

Հոդված 8. Վիկտիմիզացիայի արգելքը

Արգելվում է մարդու համար ստեղծել նվազ բարենպաստ պայմաններ, եթե նա բարեխղճորեն հայտնել է խտրականության մասին, վկա է դարձել խտրականության դրսևորմանը, մերժել է կատարել խտրականության հրահանգը կամ որևէ կերպ մասնակցել է սույն օրենքով նախատեսված խտրականության դրսևորման դատական գործին:

9. Ապացուցման պարտականություն

1.1) Խտրականության վերաբերյալ դիմումը առերևույթ հաստում է.

ա. Անձը և/կամ մի խումբ անձինք սույն օրենքով պաշտպանված խմբի անդամ է/են;

բ. Փաստերը, որոնք ենթադրում են խտրականության դրսևորում,

1.2) Պատասխանող կողմը պարտավոր է ապացուցել խտրական վերաբերմունքի բացակայությունը:

2.1) Անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ ուղղակի խտրականությունը կարող է հաստատվել վերը նշված չափանիշներով.

ա. Ցույց տալով նվազ բարենպաստ վերաբերմունքի առկայությունը,

բ. Համեմատելով համանման իրավիճակում գտնվող, բայց տարբեր հատկանիշներ ունեցող այլ անձի և/կամ մի խումբ անձանց հետ, ներառյալ ենթադրական կամ նախկինում տեղի ունեցած համեմատություններ;

գ. Ուղիղ խտրականությունը չի կարող հիմնավորվել որպես բացառություն;

դ. Իրավիճակի փորձարկման միջոցով ձեռքբերված ապացույց:

2.2) Անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ անուղղակի խտրականությունը կարող է հաստատվել վերը նշված չափանիշներով.

ա. Ցույց տալով, որ անձի և/կամ մի խումբ անձանց համար ստեղծվել են մյուսների հետ համեմատած ավելի անբարենպաստ պայմաններ;

բ. Ներկայացնելով վիճակագրական տվյալներ,

գ. Ներկայացնելով հասարակական ոչ-առևտրային, միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների զեկույցները:

Հոդված 10. Խտրականության բացառությունները

1) Գործողությունը խտրական չէ, եթե այն սահմանափակում է այլ անձանց իրավունքներն ու ազատությունները և ստեղծում արգելքներ դրանց իրականացման համար, ինչպես նաև, տրամադրում է որոշակի հատկանիշներով անձին և/կամ մի խումբ անձանց արտոնություններ ժամանակավոր կառուցողական գործողություններ շրջանակում, ինչպիսին են՝

ա. Պետության կողմից հատուկ պաշտպանություն առանձին խմբի անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն այդպիսի պաշտպանության կարիք;

բ. Միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են առանձին խմբի անձանց ինքնության պահպանմանը, եթե այդպիսի միջոցներն անհրաժեշտ են;

գ. Արտոնությունների տրամադրում և փոխհատուցում առանձին խմբի անձանց օրենքով նախատեսված դեպքերում;

դ. Պետության կողմից առանձին խմբի անձանց համար սոցիալական երաշխիքների սահմանում;

ե. Օրենքով սահմանված հատուկ պահանջներ առանձին խմբի անձանց իրավունքների իրականացումն ապահովելու նպատակով:

2) Աշխատանքին ներհատուկ պահանջներ

ա. Որոշակի հատկանիշների հիմքով տարբերարակումը չի հանդիսանում խտրականություն, երբ, ելնելով տվյալ աշխատանքային գործունեության բնույթից կամ աշխատանքի կատարման համատեքստից, անձին և/կամ մի խումբ անձանց հատկանիշները հանդիսանում են աշխատանքին ներհատուկ և որոշիչ պահանջներ, այն դեպքում երբ դրանց նպատակները իրավաչափ են, իսկ պահանջները՝ համաչափ:

բ. Զինված ուժերում, ոստիկանությունում, փակ և/կամ կիսափակ հաստատություններում կամ հանրային ծառայություններում պարտադիր չէ աշխատանքի վերցնել կամ աշխատանքի համար պահել անձանց, ովքեր չունեն անհրաժեշտ կարողությունները կատարելու համար այն գործողությունները, որոնք կարող են պահանջվել՝ հաշվի առնելով նման ծառայությունների գործառնական կարողությունների պահպանման իրավաչափ նպատակը:

գ. Անձի կրոնը կամ հավատքը կարող են լինել աշխատանքին ներհատուկ և իրավաչափ պահանջներ եկեղեցիների և այլ պետական կամ մասնավոր հոգևոր կազմակերպություններում, որոնց նպատակները հիմնվում են կրոնի կամ հավատքի վրա, աշխատելու համար: Այսպիսի կազմակերպությունները չեն կարող անձին խտրականության ենթարկել ցանկացած հիմքով:

դ. Քաղաքացիության հիմքով անձին նվազ բարենպաստ պայմաններ տրամադրելը չի հանդիսանում խտրականություն;

ե. Խտրականության արգելքի բոլոր բացառությունները պետք է մեկնաբանվեն հետապնդվող նպատակին համաչափ:

3) Անհրաժեշտ հնարավորությունների պահանջ

Անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարումը, որոնք չեն պահանջում անհամափաչ կամ անտեղի ջանքեր, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց կիրառումը չի հանդիսանում խտրականություն:

Հոդված 11. Կառուցողական գործողություններ

Կառուցողական գործողությունները հատուկ/առանձնահատուկ ժամանակավոր միջոցներ են ուղղված իրավական կամ փաստացի անհավասարությունների վերացմանը մի խումբ անձանց և մնացած հասարակության միջև՝ հնարավորություն

ընձեռելով անձին և/կամ մի խումբ անձանց իրացնել օրենքով նախատեսված հավասար իրավունքներն ու ազատությունները:

Հոդված 12. Հաղորդելու և տեղեկատվություն տրամադրելու պարտականություն

- 1) Սույն օրենքի հոդված 3-ում սահմանված մարմիններն ու անձինք խտրականությունից տուժած անձի և/կամ մի խումբ անձանց համաձայնությամբ հաղորդում են խտրականության հիմնավոր կասկածի մասին Խտրականության կանխարգելման մարմնին:
- 2) Սույն օրենքի հոդված 3-ում սահմանված մարմիններն ու անձինք Խտրականության կանխարգելման մարմնի պահանջով 15 օրվա ընթացքում տրամադրում են խտրականության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունն ու առնչվող փաստաթղթերը:

Հոդված 13. Խտրականության կանխարգելման և հակազդման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները

1. Խտրականության կանխարգելման և հակազդման պետական քաղաքականությունն ուղղված է՝
 - 1) Բոլոր պետական մարմիններում խտրականության բացառմանը;
 - 2) Կառուցողական գործողությունների կիրառմանը;
 - 3) Խտրականության վերաբերյալ փաստերի ժամանակին հայտնաբերմանը և խտրականությունից տուժած անձի և/կամ մի խումբ անձանց արդյունավետ պաշտպանության ապահովման համար պայմանների ստեղծմանը;
 - 4) ՀՀ բնակչության շրջանում՝ անձանց հանդեպ հարգանքի դաստիարակմանը և քարոզմանը, անկախ այդ անձանց որոշակի հատկություններ ունենալուց;
 - 5) Խտրականության դեմ քարոզչական գործունեության ընդլայնմանը;
 - 6) Պետական մարմիններում խտրականության վերացմանն ուղղված ներքին ընթացակարգերի զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2.

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հոդված 14. Խտրականության կանխարգելման և հակազդման լիազոր մարմինները

1. Խտրականության կանխարգելման և հակազդման լիազոր մարմիններն են՝
 - 1) ՀՀ Ազգային Ժողովը;
 - 2) ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը;
 - 3) ՀՀ Կառավարությունը;
 - 4) Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները;
 - 5) Հասարակական կազմակերպությունները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:
2. Լիազոր բոլոր մարմինները ապահովում են կանոնավոր համագործակցություն խտրականության կանխարգելման և հակազդման ուղղությամբ:
3. Խտրականության կանխարգելման և հակազդման լիազոր մարմիններն իրենց գործունեության շրջանակներում պարտավոր են կիրառել կառուցողական գործողություններ՝ սույն օրենքի նպատակների իրագործման համար:

Հոդված 15. ՀՀ Ազգային Ժողովի լիազորությունները խտրականության կանխարգելման և հակազդման շրջանակներում

1. ՀՀ Ազգային Ժողովը՝

- 1) Ընդունում է խտրականության կանխարգելման և հակազդմանն ուղղված օրենքներ;
- 2) Սահմանադրությամբ իրեն լիազորված գործառույթներն իրականացնելիս հաշվի է առնում խտրականության բացառման սկզբունքը;
- 3) խտրականության կանխարգելման և հակազդման նպատակով իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործողություններ;
- 4) Քննարկում է Խտրականության կանխարգելման մարմնի տարեկան հաշվետվությունը և առաջարկությունները,
- 5) Մարդու իրավունքների պաշտպանի համար ապահովում է ամենամյա բյուջետային երկտող՝ Խտրականության կանխարգելման մարմնին համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներն ապահովելու նպատակով:

Հոդված 16. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները խտրականության կանխարգելման և հակազդման շրջանակներում

1. Խտրականության հակազդման և կանխարգելման համար պատասխանատու Խտրականության կանխարգելման մարմնի գործողությունները իրականացվում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հանդիսանալով Խտրականության կանխարգելման մարմին՝

- 1) Տրամադրում է իրավական խորհրդատվություն բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր դիմել են խտրականության բողոքներով:
- 2) Կատարում է խտրականությանը վերաբերող հետազոտություններ, Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնում է եզրակացություններ և առաջարկություններ:
- 3) Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում է խտրականության դեմ օրենքի դրույթների կիրառման մշտադիտարկում:
- 4) Միջոցներ է ձեռնարկում խտրականության դեմ օրենսդրության բարելավման և խթանման, ինչպես նաև իրազեկման բարձրացման ուղղությամբ:
- 5) Ուսումնասիրում է անհատների կամ խմբերի կողմից ներկայացվող բողոքները և հիմնվելով դեպքերի վրա՝ հրապարակում է պարտադիր ուժ կրող որոշումներ:
- 6) Մասնավոր դեպքերում կողմերի համաձայնությամբ կատարում է միջնորդի դեր:
- 7) Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ի պաշտոնե իրականացնում է օրենքի խախտման դեպքերի հետազոտություններ:
- 8) Խտրականության հակազդման և կանխարգելման շրջանակներում իրականացնում է մշտադիտարկում:

- 9) Համագործակցում է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների և այլ անձանց հետ խտրականության կանխարգելման և հակազդման նպատակով:
- 10) ՀՀ Ազգային ժողովի առաջարկությունների հետ համատեղ ներկայացնում է խտրականության վերաբերյալ տարեկան հաշվետվություն և *արտահերթ* գեկույց:
- 11) Տրամադրում է մեկնաբանություններ հեռանկարային օրենսդրության վերաբերյալ՝ ապահովելու վերջինիս համատեղելիությունը սույն օրենքի հետ:
- 12) Իրականացնում է գործողություններ խտրականության վերաբերյալ իրազեկման բարձրացման նպատակով:
- 13) Իրականացնում է հետևողական գործողություններ որոշումների կատարումն ապահովելու նպատակով:
- 14) Հավաքագրում և վերլուծում է խտրականության վերաբերող դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները:
- 15) Տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն համապատասխան պետական մարմին, որը պատասխանատու է մարդու իրավունքների **միջազգային** պայմանագրային մարմիններին հաշվետվություն ներկայանցելու համար:
- 16) Խտրականության կանխարգելման և հակազդման նպատակով իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործողություններ:

Հոդված 17. ՀՀ կառավարության լիազորությունները խտրականության կանխարգելման և հակազդման շրջանակներում
 ՀՀ կառավարությունը՝

- 1) Ապահովում է միասնական քաղաքականության իրականացում՝ ուղղված հասարակական կյանքի բոլոր ոլորտներում խտրականության բացառման սկզբունքի պահպանմանը;
- 2) ուղղորդում և համակարգում է գերատեսչությունների, գործադիր իշխանության, այլ կենտրոնական և տեղական մարմինների կողմից խտրականության կանխարգելման և հակազդման ապահովմանն ուղղված աշխատանքները, նեոարյալ օրենքով սահմանված կառուցողական գործողությունների զարգացումը, աշխատակիցների հավաքագրման քաղաքականությունը և ներքին խտրականության բողոքարկման մեխանիզմը և ներքին հաշվետվությունները, աշխատակիցներին վերապատրաստում տրամադրելու բոլոր ոլորտներում, նեոարյալ՝ առողջապահության, կրթության, սոցիալական ծառայությունների և իրավապահ մարմինների;
- 3) Նորմատիվ-իրավական ակտեր ընդունելիս հաշվի է առնում խտրականության բացառման սկզբունքը:
- 4) Խտրականության կանխարգելման և հակազդման նպատակով իրականացնում է օրենքով սահմանված այլ գործողություններ:
- 5) Մարդու իրավունքների պաշտպանի համար ապահովում է ամենամյա բյուջետային երկտող՝ Խտրականության կանխարգելման մարմին համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներն ապահովելու նպատակով:

Հոդված 18. Աշխատանքի պետական տեսչության լիազորությունները

Աշխատանքի պետական տեսչությունը՝

- 1) Հավաքագրում է տեղեկավորություն խտրականության դեպքերի և միջադեպերի վերաբերյալ և այն ներկայացնում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին մինչև փետրվարի մեկը:
- 2) Ապահովում է իրազեկության բարձրացում՝ աշխատելով գործատուների, աշխատողների հետ՝ կազմակերպելով դասընթացների և տրամադրելով էլեկտրոնային նյութեր:
- 3) Ներառում է խտրականության խնդիրը տեսչության մեթոդաբանության մեջ աշխատանքային վայրում կանոնավոր ստուգումներ կատարելիս:
- 4) Ուղղորդում է աշխատանքի վայրից ստացված խտրականության բողոքները ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին:

Հոդված 19. Այլ գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները խտրականության կանխարգելման և հակազդման շրջանակներում

1. Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասությունների շրջանակներում՝

- 1) Միջոցներ են ձեռնարկում Խտրականության դեմ օրենսդրության բարելավման և խթանման ուղղությամբ, նեոարյալ աշխատանքի ընդունման ներքին քաղաքականության զարգացումը, աշխատակիցների վերապատրաստումը և խտրականության բնագավառում բողոքարկման ընթացակարգերը:
- 2) Իր գործողությունների շրջանակում բազմակողմանիորեն ուսումնասիրում է խտրականության դեմ օրենսդրության դրույթները:
- 3) Համագործակցում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ:
- 4) Բարձրացնում է հանրության իրազեկումը խտրականության դեմ օրենսդրության վերաբերյալ:

Հոդված 20. Հասարակական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները խտրականության կանխարգելման և հակազդման շրջանակներում

Ֆիզիկական և իրավաբանական անձինք՝

- 5) Միջոցներ են ձեռնարկում Խտրականության դեմ օրենսդրության բարելավման և խթանման ուղղությամբ՝ հանրային իրազեկման բարձրացման և պաշտպանության միջոցով:
- 6) Անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով մասնակցում են հանրային քննարկումներին, որոնք վերաբերում են Խտրականության դեմ օրենսդրությանը և ոլորտում առկա խնդիրներին:
- 7) Համագործակցում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ:
- 8) Խտրականության բողոքներ են ներկայացնում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին անձի և/կամ մի խումբ անձանց անունից:

- 9) Իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:

Հոդված 21. Տվյալների հավաքագրում

1. Բոլոր դատական մարմինները պահպանում են խտրականությանը վերաբերող դատավարության և խտրականության հիմքով վարույթների գրառումները և ներկայացնում են դրանք ՀՀ արդարադատության նախարարությանը:
2. Արդարադատության նախարարությունը մինչև փետրվարի մեկը ներկայացնում է նախորդ օրացուցային տարվա խտրականությանը վերաբերող գրառումները և վիճակագրական տվյալները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

ԳԼՈՒԽ 3.

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 22. Խտրականության պատասխանատվություն

Սույն օրենքի դրույթները խախտող անձինք ենթարկվում են սույն օրենքով սահմանված քաղաքացիական և/կամ վարչական պատասխանատվության:

Հոդված 23. Խտրականության ակտերի դեմ միջոցներ

1. Անձը և/կամ մի խումբ անձինք, ովքեր գտնում են, որ ենթարկվել են խտրականության, իրավունք ունեն դիմել Մարդու իրավունքների պաշտպանին կամ դատարան, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ մարմինների:
2. Խտրականության բողոքը պետք է ուղղվի Մարդու իրավունքների պաշտպանին կամ օրենքով սահմանված ժամանակահատվածում ներկայացվի դատարան, երբ անձը և/կամ մի խումբ անձինք տեղեկացել են կամ պետք է տեղեկացվելին սույն օրենքով սահմանված իրենց իրավունքի ոտնահարում մասին:
3. Այդ անձանց ներկայացուցիչները, այդ թվում՝ փաստաբանները կամ հասարակական կազմակերպությունները կարող են բողոք ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանին տուժածների նախնական գրավոր համաձայնության դեպքում:

Հոդված 24. Մարդու իրավունքների պաշտպանի քննությանը ենթակա բողոքները

1. Մարդու իրավունքների պաշտպանը քննում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց դեմ խտրականությունից ենթադրաբար տուժածի/տուժածների կամ նրանց ներկայացուցիչներին կողմից ներկայացված բողոքը:
2. Դատավորների դեմ ներկայացվող խտրականության բողոքները վերանայվում են Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կողմից:

3. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ենթակա են վերանայման Լրատվամիջոցների կողմից կատարված խտրականության միայն ծայրահեղ գործողությունները կամ հայտարարագրերը՝ ի բացառություն խոսքի ազատության իրավունքի:

Հոդված 25. Մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացնելու ժամկետները

1. Բողոքը Մարդու իրավունքների պաշտպանին պետք է ներկայացվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմումատուն իմացել է կամ պետք է իմանար իր դեմ կատարված խտրականության մասին:
2. Ժամկետի բացթողնման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դիմումատուն/դիմումատուները հիմնավորում է/են, որ բողոքը չի ներկայացվել սույն հոդվածի առաջին մասում սահմանված ժամկետում՝ դիմումատուի անձնական հանգամանքներից ելնելով (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն):

Հոդված 27. Բողոքի քննումը

1. Բողոքը քննելիս Մարդու իրավունքների պաշտպանը իրավասու է՝
 - 1) Ուսումնասիրել բողոքին առնչվող ցանկացած նյութ կամ փաստաթուղթ;
 - 2) Բողոքի բազմակողմանի քննությունն ապահովելու նպատակով հրավիրել տուժածին, պատասխանողին և այլ անձանց, ովքեր կարող են տրամադրել, հաստատել և/կամ հերքել ներկայացված տեղեկատվությունը:
 - 3) Կողմերի համաձայնությամբ կարող է միջնորդել ենթադրյալ գոհի և օրինազանց անձի միջև հաշտեցման նպատակով:
2. Հետազոտությունը իրականացվում է համաձայն սույն Օրենքի Հոդված 9-ի դրույթների:

Հոդված 28. Մարդու իրավունքների պաշտպանի որոշումները

1. Բողոքը ստանալուն պես Պաշտպանը հնարավորնիս շուտ բայց ոչ ուշ քան 30-օրյա ժամկետում որոշում է ընդունում՝ հիմնվելով սույն Օրենքի հոդված 9-ի և 10-ի 1-ին հատվածում, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օրենքի հոդված 10-ի 1,2 հատվածներում սահմանված պայմանների վրա՝
 - 1) բողոքը քննարկման ընդունել;
 - 2) բողոքի քննարկումը մերժել;
2. Պաշտպանի որոշումը ենթակա է բողոքարկման Պաշտպանի որոշումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:
3. Սույն հոդվածի մաս 1-ում նշված որոշումը չի հանդիսանում անձի կամ մի խումբ անձանց դատարան դիմելու սահմանափակում:

Հոդված 29. Քննարկված բողոքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի որոշումները

1. Քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝
 - 1) անձի հանդեպ խտրականության հայտնաբերում;
 - 2) անձի հանդեպ խտրականության բացակայության դեպքում, մերժում է բողոքը;
 - 3) հաշտության համաձայնության դեպքում դադարեցնում է բողոքի քննարկումը;

2. Պաշտպանի որոշումը ենթակա է բողոքարկման Պաշտպանի որոշումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

3. Խտրականության հայտնաբերման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանը իրավասու է կիրառել վարչական տույժեր նախատեսված ՀՀ Վարչական իրավախախտումների օրենսգրքով:

Հոդված 30. Դատական միջոցների

1. Յուրաքանչյուր անձ և/կամ մի խումբ անձինք, ով իրեն համարում է խտրականության զոհ, ինչպես նշվում է այս Օրենքում, կարող է հայց ներկայացնել Քաղաքացիական, ինչպես նաև Վարչական դատարան.

ա) Պարզելու թե արդյոք տեղի է ունեցել իր իրավունքների ոտնահարում;

բ) Կանխելու շարունակական խախտումները;

գ) Պահանջու վարչական պատիժ;

դ) Վերականգնելու զոհի՝ խախտումից առաջ ունեցած կարգավիճակը՝ պատճառված վնասը վերահաստատման և/կամ փոխհատուցման միջոցով:

2. Վնասի փոխհատուցման կանոնները սահմանվում են համապատասխան օրենքով:

ԳԼՈՒԽ 4. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 31. Ուժի մեջ մտնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՕ-23-Ն օրենքը(այսուհետ՝ Օրենք) լրացնել 6.2. հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 6.2. Պաշտպանը խտրականության կանխարգելման ոլորտում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է խտրականության կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«2. Պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները: Բացառությամբ այն բողոքների որոնք վերաբերում են խտրականության կանխարգելմանը»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«6) անձի հանդեպ խտրականության հայտնաբերման, և ոլորտի իրավասու մարմնին որոշումը փոխանցելու մասին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգիրքը լրացնել 2.2. պարագրաֆով և 1087.2. հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«§ 2.2. Խտրականության դրսևորման արդյունքում պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

Հոդված 1087.2. Խտրականության հետևանքով հասցված վնասի հատուցում

Անձը խտրականության դրսևորման արդյունքում իրավունք ունի պահանջելու իրեն հասցված վնասի հատուցում սույն օրենսգրքով նախատեսված կարգով»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6 վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել 15.1 գլխով և 213.2 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Գլուխ 15.1. Վարչական իրավախախտումներ խտրականության դրսևորման արդյունքում

Հոդված 213.2. Խտրական վերաբերմունքի դրսևորումը

Օրենքով սահմանված խտրականության յուրաքանչյուր դեպք առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը կապված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փորձով նախատեսված խտրականությունն արգելող դրույթների առավել արդյունավետ կիրառման հետ, ինչպես նաև, խտրականության դեմ առավել արդյունավետ պայքարի, հակազդման և կանխարգելման հստակ միջոցների սահմանման հետ: Խտրականության դեմ համապարփակ օրենսդրության ընդունման անհրաժեշտությունը նշվել է նաև 2011թ Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման Հայաստանի վերաբերյալ զեկույցում՝ որպես ԵՀԲ 2012թ Գործողությունների ծրագրի հետևողական կատարման բաղկացուցիչ մաս:

Օրենքի նախագիծը նպատակուղղված է Հայաստանի Հանրապետությունում խտրականության բոլոր ձևերի վերացմանը: Խտրականությունը համընդհանուր խնդիր է, որի դեմ պայքարը կարևորվում է աշխարհի առաջատար ուժերի, գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունների և ողջ հանրության կողմից:

Հայաստանի Հանրապետությունում, համաձայն վերոնշյալ օրենքի, խտրականության դեմ ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- 1) անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքների և ազատության ապահովումը,
- 2) անձի և/կամ մի խումբ անձանց հավասարությունը օրենքի առջև,
- 3) յուրաքանչյուր անձի արժանապատվության նկատմամբ հարգանքը,
- 4) անձի և/կամ մի խումբ անձանց հավասար հնարավորությունների ապահովումը,
- 5) կանխարգելման և հակազդման հստակ և արդյունավետ միջոցների նախատեսումը,
- 6) խտրական վերաբերմունք դրսևորող անձանց, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվության ենթարկելը:

Օրենքի նախագիծը կարգավորում է խտրականության հետ կապված հարաբերությունները, սահմանում է հասկացությունը, տեսակները, խտրականության կանխարգելման բնագավառում լիազոր մարմինները և այդ մարմինների լիազորությունները, խտրականության կանխարգելման հատուկ միջոցների տեսակները, դրանք ընդունելու և կիրառելու հիմքերը, ինչպես նաև, հատուկ կարևորություն ունեցող շատ այլ հասարակական-իրավական հարցեր:

Օրենքի նախագիծն ուղղված է ՀՀ-ում խտրականության կանխարգելման և խտրականության բռնության ենթարկված անձանց պաշտպանության հնարավորության ապահովմանը: Նախագիծը պարունակում է հատուկ միջոցներ խտրականության ենթարկված անձանց պաշտպանության համար: «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում խտրականության հակազդման և կանխարգելման ոլորտում հստակ մեխանիզմներ կապահովի անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային

այլ փաստաթղթերին համահունչ դրույթների և խտրականությունից տուժողների հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ նոր սկզբունքների կամրագրվեն:

«Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագիծը պատրաստվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և հետևյալ միջազգային կազմակերպությունների փորձագետների մասնակցությամբ և աջակցությամբ՝

- Հայաստանում Եվրոպական Միության Խորհրդատվական Խումբ /ԵՄԽԽ/;
- Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական Հանձնաժողով;
- Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գործակալություն /ԵԱՀԿ ԺՀՄԻԳ/:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ», « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Խտրականության դեմ», « Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: